

«Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի շնորհավորանքի խոսքը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ

30.12.2021

Իմ հայրենի մարզի սիրելի բնակիչներ, հարգելի հայրենակիցներ, Ի սրտե շնորհավորում եմ բոլորիդ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

Այս օրերին մեզանից շատերը մտովի կամ առարկայորեն ամփոփել են անցնող տարին, առանձնացրել ձեռքբերումներն ու կորուստները, իրականացված ու անկատար մնացած ծրագրերը և նախանշել գալիք տարվա առաջնահերթությունները:

Որպես Արմավիրի մարզպետ՝ շատ հակիրճ կձևակերպեմ 2022 թվականին մարզային իշխանության որդեգրած քաղաքականությունը, այն է՝ համառ և նպատակային աշխատանքով տարբեր ոլորտներում ապահովել արդյունքային կարևոր ցուցանիշներ:

Արմավիրի մարզի սիրելի բնակիչներ, հարգելի գործընկերներ, Մարզային բազմաոլորտ տնտեսության զարգացման տեսլականը կյանքի ենք կոչելու միահամուռ ուժերով, յուրաքանչյուրս մեր գործառույթների և հնարավորությունների շրջանակում՝ առանց ջանք ու եռանդ խնայելու: Եվ սա է դառնալու հաջողության հասնելու մեր գրավականը, մեր հայրենի մարզը շենացնելու միակ ճանապարհը, որով ուղղորդվելու ենք 2022 թվականի ընթացքում:

Իսկ այսօր եկեք նախ մեր խոնարհումը հայտնենք հանուն հայրենիքի նահատակված մեր բոլոր հերոսների հիշատակին, մեր զորակցությունը՝ նրանց ընտանիքներին և մեր համախմբվածությունը՝ ավելի լավ Հայաստան, մարզ ու համայնք ունենալու գաղափարի շուրջ:

Կրկին շնորհավորելով բոլորիդ հույս, հավատ ու սեր ներշնչող ամանորյա տոների առթիվ՝ ցանկանում եմ, որ խաղաղ երկնքի ներքո յուրաքանչյուրս իրականություն դարձնենք մեր մեծ ու փոքր նպատակները, լինենք համերաշխ ու միասնական: Թող առողջությունը, սերն ու հաջողությունը գերիշխի բոլոր ընտանիքներում: Շնորհավոր Ամանոր և Սուրբ ծնունդ: